


THE DICKRIS PUBLISHING CO.

NEW YORK CITY.



ՇԱՐԱԹԱՐԵՐՈ

ՏԵԳՐԻՍԻ ՍԻՒՆԱԿՆԵՐԸ ԲԱՑ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՋԵՒՑ

ԱՂՊԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 68

ՆԻՒ ԵՈՐԲ, ՇԱՐԱԹ, ՓԵՏՐՎԱՐ 25 1899

ԳԻՆ 3 ՍԷՆՔ



ՁԵՑՈՒՆԻ ՍԻՒՆԱԿԸ

ՈՂՐԵՐԳՈՒԹԻՒՆԸ

Մեծն Ներսիսի ողբերգութիւնն անգլի կուսնեայ յառաջիկայ Շարաթ երեկոյ: Վարագոյրը պիտի բացուի ժամը ճիշդ 8ին՝ առանց իսկ մէկ րոպէ կրնալ սպասելու:

Նուագածուաց խումբը պիտի նուագէ Հայկական երգեր՝ ձայնագրեալ օրինակներէ:

Տոմս վաճառողներէն ու Օժանդակներէն կը խնդրուի որ գէթ երկու օր առաջ՝ իրենց հաշիւներն ու աւելցած տոմսերը Գանձապետին յանձնեն:

Գերատաննեաց հանգրծներն, որք խիստ շքեղ ու թանկագին են, պիտի տրուին անգլական նշանաւոր ընկերութեան մը կողմէ՝ պզտիկ փոխարինութեամբ:

Մտից տոմս պիտի վաճառուի նաև թատերասրահին դուռը:

Յայտագրներն հրատարակ կ'ընեն գաղտնի շարքով:

Բարագրիս եւ շրջակայից բոլոր Հայերն կը հրաւիրուին ներկայ ըլլալ այս ողբերգութեան, որ իր անսակի մէջ առաջինն է աննման պիտի կըրնայ ըլլալ: Կարգ:

Մտից գին \$ 1.00, 75 և 50 սէնթ: Օթեակ՝ 5.00 Տօլար:

Լիրիք Հօլ, 623-627 Յրդ Կաթիլ, 42րդ փողոցին մօտ, Նիւ Եորք: Շարաթ երեկոյ, Մարտ 4: Թատերասրահը պիտի բացուի ժամը 7½ին:

Պատահական թղթակից մը կըսէ թէ քանի մը ամիս առաջ Մօնթալայի մի քանի Հայերն հանգանակութիւն մ'ըրած ու գրամը տեղւոյն Հայ Ընդհանրականութեան Պ. Ս. Ա. ի յանձնած են՝ Նիւ Եորք զրկուելու համար: Այս գրամն ընդհանուր Գանձապետը ըստացած չէ տակաւին:

Երկու շարաթէ ի վեր ընդհանուր Գանձապետը ոչինչ ստացած է դուրսէն՝ իր արդէն ստացածներուն վրայ աւելցնելու համար: Հանգանակութիւնն դեռ գոցուած չըլլալով՝ տարօրինակ երևոյթ մ'է այս:

Պատմին Հայոց հանգէսն, որ անգլի պիտի ունենայ վաղը, կը յուսանք թէ գոհացուցիչ արդիւնք մը պիտի բերէ: Պատմն իր շրջակայներով Նիւ Եորքէ պակաս ու եռանդուն ժողովուրդ չունի անուշտ, և այս պատճառ կուտայ մեզ յուսալ թէ նոր Աթէնքի և անոր շրջակայից Հայոց նուէրը Նիւ Եորքցիներու տուածէն շատ պակաս չի պիտի մնայ անօթի Հայ լեռնականներուն:

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Գաղղիական Հանրապետութեան Նախագահը Ֆրիլիքս Յօր շարքովու քաղաքականութեան հերոսը եղաւ՝ իւր անակնկալ մահուամբ: Պօնափարթեաններն ու Օրլեաններն այս սխուր առիթէն ջանացին օգուտ քաղել՝ իրենց թիկնածուները Յրանսայի կործանած գազը բարձրացնելու համար: Շատ վախ կար թէ այս հակահանրապետական կուսակցութիւնները յեղափոխութիւն մը հանելով՝ պիտի յաջողէին Հանրապետութիւնը կործանել վերջապէս: Տրէյֆուզի խնդիրը արդէն յուզուած ու մտաւորաւ յեղափոխութեան երկիւղ մը յառաջ բերած էր Գաղղիոյ ժողովուրդին մէջ, անանկ որ բոց մը միայն կը պահէր դիւրամա ու դիւրաբորոք Յրանսացի թանկեցնելու համար: Շատեր կարծեցին թէ Յօրի մահը պիտի ըլլար այդ լուցկին, բայց այդպէս չեղաւ: Կառավարութիւնը յաջողեցաւ դժուարութեանց առաջն առնուլ՝ ժամանակիկ նոր ընտրութիւնը փութացնելով:

Յրանսական սահմանադրութեան տրամադրութեանց համաձայն՝ ողգային ժողովը գումարուեցաւ անցեալ շարքովու Վէրսայի մէջ, ուր հանգուեցաւ Նախագահին յաջորդը ընտրուեցաւ յանձին Լօպէի՝ ծերակուտի նախագահին:

Լօպէ ծնած է 1830 թուականին Մօնթելլի մարի մէջ աննշան ծնողքէ: Երեսփոխան ընտրուելէ առաջ՝ Լօպէ հասարակ փաստաբան մ'էր: Նախագահ Բարնօյի վարչութեան օրով Լօպէ նախարար եղաւ, բայց Փանամի դժուարութեանց խնդրոյն մէջ կորսնցուց իր ժողովրդականութիւնն ու ինկաւ նախարարութենէ: Այդ թուականէն ի վեր Լօպէ երկիւցս ծերակուտին նախագահ ընտրուեցաւ և նոյն պաշտօնը կը վարէր տակաւին երբ Գաղղիոյ բարձրագոյն պաշտօնին կանչուեցաւ: Նորընտիր Նախագահին վերջերս հաշտ աջօք չէր նայէր ժողովուրդը, զի կը կարծուէր թէ Տրէյֆուզի համակրողներուն կը վերաբերէր, և այս պատճառաւ էր որ իր այս վերջի ընտրութեան համար այնչափ չի ծափահարուեցաւ ժողովուրդէն՝ որչափ կ'ակնկալուէր այսօրինակ պարագաներու տակ: Բայց Լօպէի համար կըսուի թէ ուղղամիտ և կտրուկ քաղաքագէտ մ'է՝ իր պաշտօնին ու կոչման արժանի:

Այսպէս Գաղղիական Հանրապետութեան գոյութեան սպառնացող վտանգը թէև անցած կը նկատուի, բայց խորտուներն վերջացած չեն բոլորովին: միապետականը դեռ կ'երազեն Հանրապետութիւնը տապալել: Բայց այդ երազը երազ ըլլալէ չի պիտի կրնայ դադարիլ, զի Վօլթէններու Հայրենիքը դժուարին է, եթէ ոչ անկարելի, նորէն միապետի մը լուծին տակ դնել:

Լօնտօնէն հեռագիր մը լուր կը բերէ Բէքինէն՝ թէ Թալիէվանի մէջ Ռուսաց և Չինեացի մէջ կռիւ մը պա-

տահած ու 100 չինացի մեռած են անցեալ շարքովու: կռուի պատճառն է եղեր արոց խնդիրը: Ուրիշ հեռագիր մը մեռողներու թիւը 300 կը բարձրացընէ:

Թալիէվան գրաւուեցաւ Ռուսիոյ կողմէ, իբր մէկ տարի առաջ՝ Փօրթ Արթըրի գրաւումէն քիչ վերջ: Ռուսիոյ այս ընթացքն էր որ անցեալ տարի քիչ էր մնացեր որ բաղխում մը յառաջ բերէր Եւրոպայի երկու մեծագոյն տէրութեանց մէջ լուր:

ՆՈՂՈՒ ՄԸ ԳՐԱՎՈՆԵՐԸ

Սուրբ Մարտիոյ Հայ Թերթի մի ուրիշ թղթակցին է, եթէ երբէք ներելի է վարագը թղթակից անուանել (վարագ կը նշանակէ վայրի խոզ, եսպանի սօմուզ):

Ցաւալի է տեսնել թէ անարատ Արմէնիան այս անգամ ցեխերու եւ աղտեղութեանց մէջէն վարագ մը վեր առած ու առօք փառօք իւր 43րդ թուի մէջ բազմեցուցած է զայն, որովհետև այս խեղճ արարածը իր մարգարայեան շատ դուր եկող Հայ-հոյութիւններ ու անմօթ առակներ գրած է... ՏԻԳՐԻՍԻՆ՝ Հայ ազգի տունն ու եկեղեցին քանդուելու համար հաստատուող այս Հայ լրագրին դէմ, որ Պրիման Հայրիկի մասին անգամ համարձակած է դիտողութիւններ, անվերջանալի ու անսպասակ յարձակումներ ընել: Ի՞նչ ուժեր... որ խոզ-թղթակից կարծեօք՝ այնպիսի «յարմար միջոցի մը գործուած է երբ հարկուաւոր ընտանիքներ Հայաստանի մէջ կրօնափոխ կ'ըլլան և Լուսաւորչի եկեղեցւոյն աւերակներուն վրայ կաթաղկուելու կը բարձրանայ» եղեր:

Իսկ վարագի պարզ և անպատկառ Հայհոյութեանց մենք պատասխանել պէտք չենք զգար, զի նախ արժէք ու կշիռ չունին, և երկրորդ՝ խոզի մը լեզուէն չենք հասկնար: Ուստի խոնարհաբար պիտի խնդրենք մեր Մարտիոյ յարգելի պաշտօնակիցն որ բարեհաճի հասկնել այդ մարդուն թէ ՏԻԳՐԻՍԸ Հայրիկի «Հրաւիրակը» շատ քաջ կը հասկնայ ու կ'ըզմայր անոր հեղինակի հոգոյն վրայ, բայց Հայրիկը անսխալ էակ մը չի դաւանիր բնաւ:

Մեր աղբը որչափ աւելի ողբալի պիտի ըլլար, եթէ մեր գրողներն ու խորհողներն այս վարագի նման միջնադարեան կոյր, մոլեռանդ ու փտտած գաղափարներով տոգորուած ըլլային: Ինչպէս որ ուրիշ անգամ ըսած ենք՝ կրկնենք նորէն, յօգուտ մեր ընթերցողաց թէ՛ մենք Հայրիկը՝ վարագին, այս խոզին պէս չենք սիրեր ու ըմբռներ, այլ կը յարգենք ու կը պաշտենք զայն մարդու մը պէս և հարազատ գաւազի մը պէս, բայց միևնոյն ատեն անոր սխալները քննադատել չենք վախնար բնաւ:

Բայց խոզերը այս ամենն ըմբռնելու ըղևղ ունին՝ իրենց պզտիկ գլխին մէջ... Ի հարկէ ոչ:

ՏԻԿՆԱՆՑ ՈՐԲ. ԸՆԿ. ՀԱՆԴԵՍԸ

Անցեալ Շարաթ երեկոյ անգլի ունեցաւ Նիւ Եորքի Տիկնանց Որբախընամ ընկերութեան առաջին տարեգարծին առթիւ մէկ երեկոյթը ինպատակ որբերուն:

Եղանակը շատ աննպաստ էր: Տեղատարափ անձրև մը կուգար, թեթև ընտելները կուլար մեր ամեն թշուառ որբերուն համար, իսկ այդ լացը սուղի նստեցաւ մեր ողորմելի որբերուն վրայ՝ դի շատեր, որք հաճելի օգի մը ատեն հանգէսին ներկայ ըլլալ պիտի հաճէին ու իրենց ներկայութեամբ բարոյական ու նրբակախ խրատոյս մը պիտի նուիրէին մեր ազնիւ արկիներուն նուիրական ձեռնարկին, իրենց բնակարաններուն մէջ փակուել նախընտրած էին:

Հանդիսին ներկայ էին 60 հոգիի չափ երկսեռ ազգայիններ:

Երեկոյթը շատ հաճելի էր: Ընկերութեան նախագահը Տիկնանց Մանկասարեան անգլիերէնով գեղեցիկ ճառ մը կարդաց վարդանանց պատերազմին մէջ փայլող Հայոց բարոյական արժեքներու անմահ լեզու վրայ՝ շատ հանկուցիչ ձայնով մը:

Օր. Հայկանուշ Գոթիկեան երգեց անգլիերէն կտոր մը, որը այնքան քաղցր սպաւորութիւն մը գործեց հանդիսականաց վրայ, որք բուն ու երկարատեւ ծափահարութիւնով մը ստիպեցին օրիորդը կրկին բեմի վրայ ելնել ու երգելու: Օրիորդը ուստի երգեց Մոյր Արաքսին դաշնակի վրայ անկուլ, որը անուշ խանդավառութիւն մը յառաջ բերաւ:

Այս երաժշտութիւններէ ետքը, Տիկնանց պատրաստած ուտեստի եւ ուրիշ կարգի նուէրները ծախուել սկսեցին: Հանդիսականները՝ իրենց թւոյն քիչութեան հակառակ՝ ակնկալուածէն աւելի դրամ ձգեցին հոն, որոյ գումարն 120 տարէն աւելի կը հաշուուի:

ԱՂՊԱՅ ԼՍՍԱՐԱՆ

Էլքս Հօլ, Պրօտուէյի և Չրդ Փողոցի անկիւնը, Նիւ Եորք:

Այս կիրակի երեկոյ, ժամը ճիշդ 8ին Պիտի խօսին Պ. Գ. Ս. Ճէլալեան շայ ժողովրդի կենսականութեան վրայ: Տքթ. Ս. Հ. Արգարեան՝ Ամերիկայի մէջ Հայոց յաջողութեան պայմանները:

Վրձաբանութեան նիւթ՝ — Հարստութիւնը աւելի օգտակար եղած է մարդկութեան թէ գիտութիւնը: Ժողովը պիտի սկսի ժամը ճիշդ ութնին՝ առանց մէկ րոպէ սպասելու:

Ուէսթ Հոպոլքընը լատարնի ժողովը անգլի պիտի ունենայ վաղը՝ սովորական սրահին մէջ, ուր պիտի խօսին Տքթ. Արշակունի նիւթ ունենալով Գաղտնի Հիւանդութիւնը արանց. և գրաւոր ճառ պիտի կարդայ Պ. Յ. Տէվէեան:

Ամեն չափահաս այր մարդը հրաւիրեալ է ներկայ գտնուել:



ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱԿԱՆ
Կը հրատարակուի ամէն Շաբաթ օրեր
ՏԻԳԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:

ՔԱՌԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՈՐԱՏԵՍԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ
ԲԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ
ՏԼ. ՍԹ. Տարեկան 10 Փրանք.
Տարեկան 1 50
Վեցամսեայ 75
Շուրճեայ 40

Մտար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝
To the DICKRIS PUBLISHING CO., 145 East 23d St., New York City
Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆՈՒ ԵՈՐՔ, ՇԱՐԱԹ, ՓԵՏՐՎԱՐ 25 1899.

ԱՐՓԻՍԱՐ ԴԱՒԱՃԱՆ ՄԸ ՉԷ՝

ՏԻԳԻՍԻ 40րդ թւով յուզուեցաւ այս խնդիր, որ
թէ և հին խնդիր մը, բայց մեզ ամերիկացի հայոց՝ նոր
կրնար նկատուի: Արժիար ամբաստանուած էր իբր դաւա-
ճան և մասնիչ, և ամբաստանողը սկիզբէն ի վեր կը գո-
ւային հրապարակաւ թէ աօքումաններ ունին՝ իբր սպա-
ցոյց ամբաստանութեան: Տեսնելով որ երկու կողմէն այս
խնդիր վրայ զրկու տենչ մը կար, և մանաւանդ կարծե-
լով թէ ամբաստանողներէ ոմանք «պիտի հաստատէին այս
ամբաստանութիւնն, ու տարիներէ ի վեր անյուժ մնացած
այս խնդիր ՏԻԳԻՍԻ մէջ պիտի լուծէին վերջապէս» մեր
սրբաբանը բացինք վիճարանողներուն առջև. և կը խոստա-
վանինք թէ քանի մը պարագաներու մէջ թոյլ տուինք
որ ատենք շեղին պահ մը իրենց նիւթէն ու խնդրէն, որ-
պէս զի ատենց ծայրայեղութիւնն խթան մ'ըլլար անոնց,
որք իրական փաստերն ունէին իրենց քով ու կը վարանէին
զանոնք հրապարակ նետել. բայց ի՞նչ:

Մեր ընթերցողաց այս խնդրով հետաքրքրուող մասը
անշուշտ երկու կողմին գրուածներն ու փաստերը կար-
դոց ուշադրութեամբ, և ի հարկէ գաղափար մը կազմեց
ու իր վճիռը տուաւ արդէն. մենք ալ բնականաբար մեր
գաղափարը կազմեցինք, զոր կը փութանք պարզել այսօր՝
մեր խոստման համաձայն:

Նախ ըսել հարկ է թէ այս խնդրոյ համար եթէ դա-
տարան մը երթայինք ու երկուստէք վիճարանող պարոն-
ներն իրենց փաստեր հոն ներկայացնել գային, անոնցմէ
չատերուն — եթէ ո՛չ բոլորին ըսածները՝ գատափարու-
թենէ դուրս պիտի ձգուէին բոլորովին, և թերևս անոնց
հեղինակներէ շատերն ալ դուրս հանուէին գատափարու-
թեան սենեկէն, սա պարզ պատճառի համար թէ վկայու-
թիւնը՝ մեծաւ մասամբ՝ ո՛չ միայն բուն խնդրոյն հետ
յարաբերութիւն չունէին, այլ անձնական զէմ յարձա-
կուներ և ուրիշ նորանոր ամբաստանութիւններ էին: Շատ
երկար պիտի ըլլայ եթէ փորձենք աչքէ անցնել այս բոլոր
գրուածներն. ուստի գաղափար մը տալու համար՝ կարե-
լի եղածին չափ՝ մի քանի խօսքով միայն պիտի բաւակա-
նանանք: Արժիար ամբաստանուած է հին Հնչակեան կու-
սակցութեան քայքայուած ասեմներն կամ անկէ քիչ ա-
ռաջ, մատուցութիւն ըրած ու ազգը դաւաճանած ըլլալու
ստեղծի ամբաստանութեամբ: Աւելորդ է թերևս ըսել
թէ այն ամեններն ո՛չ նոր կեանքը լոյս արեւ տեսած էր և
ոչ ալ Մարտը գոյութիւն ունէր: Սակայն ամբաստանու-
թիւնը հաստատել ջանացող կողմը՝ փոխանակ խնդրոյն հետ
կապ ունեցող փաստերու, ինչպէս երևցած է, իր բոլոր
ճիշդ թափեց՝ Մարտով ու նոր կեանքով հաստատել ամ-
բաստանութիւն մը, որ այդ թերթերէն ծեր ու հին էր
բաւական. ուստի հետեւելով ընդհանուր օրինաց՝ այդ փա-
ստերն ամենն ալ չեղեալ պիտի նկատենք, և ստիպուած
ենք նկատել, որովհետև ուղղակի կապ չունին ամբաս-
տանութեան հետ: Ըսենք պահ մը թէ Արժիար դաւաճա-
նութիւն գործած է նոր կեանքի և Մարտի մէջ, կամ թէ
վերջերս մատնած է ազգը. բայց այս նոր յանցանք-
ներով կարելի է՞ դատապարտել զայն այն մասնաւոր ու-
ճիրին համար որ խնդրոյ առարկայ է հոս — երբէք ո՛չ.
այդպիսի օրէնք չի կայ աշխարհի վրայ:

Թուրքոյ մէջ երբ մէկը ամբաստանուի, օրինաց առ-
ջև յանցաւոր կը նկատուի, մինչև որ արդարացնէ ինքզին-
քը. հոս այդ մասին օրէնքներն աւրել են բոլորովին.
ամբաստանեալ մը օրէնքներն առջև անմեղ է քաղաքակիրթ
երկրներու մէջ և անմեղ կը սեպուի, մինչև որ հաստատ-
ուի ամբաստանութիւնը:

Արժիարի խնդիր սկսած ատեն ինչ որ գրուեցինք, հի-
մայ անկէ աւելի ոչինչ գրուեցաւ այս ամբաստանութեան
վրայ, և հետեւաբար ամբաստանութիւնն հաստատուած չէ՝

քնաւ, և ամբաստանեալն արդար էր, և արդար է օրէնքի
և խոճի առջև, մինչև որ հրապարակ տօքումաններն, հ-
թէ երբէք գոյութիւն ունին, լոյս աշխարհ տեսնեն ու ամ-
բաստանութիւնը հաստատեն. սակայն մեզ կը թուի թէ
ա՛լ այս տօքումաններն ժամանակ է կասկածի ենթարկե-
լու. կարևոր խնդիր մը այսչափ ծեծուելէ և այսչափ եր-
կար ատեն կուրի առարկայ լինելէ վերջ՝ երբ անոր պա-
ցոյցներն հրապարակ չեն հանուիր ամբաստանողներու կող-
մէ, իրաւունք կուստն ամեն արդարաբար մարդու՝ կաս-
կածիլ անոնց գոյութեան վրայ:

Մարդ Տաճիկէ մը աւելի անարդար ըլլալու է գաղտ-
նի պահուած փաստերու հաւատ ընծայելով՝ դատապար-
տել մէկը, որ քառորդ դարու գործունէութիւն ունեցած
է ազգային կեանքի մէջ, և կը զարմանանք այն մարդոց,
որք Արժիարը դաւաճան կ'ընդունին սա միայն պատճա-
ռու թէ կարգ մը մարդիկ զայն դաւաճան նկատած են
...: «Վարդապետն ասաց» ուստի իրաւացի է:

ՏԻԳԻՍԻ մէջ ցարդ ներկայացուած փաստերուն ընդ-
հանրապէս կարևորութիւն չի տալով հանդերձ՝ շենք կըր-
նար ուշադրութենէ վրիպեցնել Պ. Կէճէեանի նամակը,
զոր հրատարակեցինք մեր 65րդ թւով: Արդարութիւն մը
բաժնի կըլլանք եթէ խոստովանինք թէ սա միայն նամակն
է իր սեռակին մէջ, որ խեղճ մօտ անուղղակի փաստեր
ունի իր մէջ. և եթէ հակառակ կողմէ տրուած բացատ-
րութիւններն գոհացուցիչ չըլլան, այդ նամակով կասկածը
կը գործնայ, թէ և ամբաստանութիւնն զիս ոչ սպացու-
ցած:

Ահա թէ ինչ կըրէ Պ. Կէճէեան:

«...: Յետոյ Տաճատեանը, և վերջը Զէյթունի 6 հե-
րոսները եկան, արդէն կեդրոնն ալ 8 հազի կային, եղանք
20 հազի: Ատենք սկսեցինք գաղտնի խորհուրդներ ընել. ես
և քանիներ պարզ անդամներ էինք: Օր մը հասկայոյ որ Ար-
ժիարը այլևս չի գար կեդրոնը: քանի մը օր վերջ պարզ
անդամներու ըսին թէ՛ այս իրիկուն ընդհանուր ժողով
կայ՝ կարևոր խնդրոյ մը մասին: Ներկայ էին 20էն աւելի
յեղափոխականներ՝ բաց ի Արժիարէն, որ հրաւիրուած ու
չէր եկած: Ատենք բացուեցաւ. Տաճատեանը ելաւ սաքի
վրայ, սկսեց կարգաւ Արժիարի վճարելը՝ թէ այլևս Ար-
ժիար Հնչակեան կամ յեղափոխական մէկը չի ճանչցուիր՝
կեդրոնի 4 ներքին և 5 խորհրդատու անդամներու վաւե-
րացումով: Վճարելը լինցնելէն յետոյ, պարզ անդամներս
բողոքեցինք, Տաճատեան պատասխանեց՝ թէ իր Լօնտոն
գալէն վերջ ինչ գաղտնիքներ, որ կեդրոնին ներքին ան-
կար անհաստերու: Աւ Պ. Ալապին ըսաւ թէ՛ Պ. Ալապի
հետ Արժիարի գաղափարակից եղանք, հասկայեալ և հաս-
տատեցինք թէ Արժիարը կուզէ յեղափոխական գործը
տակն ու վրայ ընել. եթէ զիս անկեզ ընկեր կը ճանչնաք,
անհատիկ ձեզ կըսեմ որ Արժիարը դաւաճան և մատ-
նիչ մէկըն է:»

Թէ ինչ է այս վճարելը և ինչ պարագաներու տակ
տրուած՝ ցոյց տալու համար մեզ զրկուած է կարգ մը վա-
ւերական շրջաբերականներ ու վճարելին օրինակը. անոնց-
մէ կը տեղեկանանք թէ 1896ի Օգոստոսի մէջ կամ քիչ
մը առաջ՝ Արժիար Պօլսոյ Հնչակեան մասնախմբի յանձ-
նարարականով Լօնտոն կուգայ Կեդրոնական Վարչութեան
մէջ մտնելու, ըսաւ ոմանց՝ Նազարէ կեանքներն հաշիւ
պահանջելու համար: Նազարէ կեանքներն կը մերժեն զայն.
մանաւանդ որ Լօնտոն գալուց ի վեր չանցան երկու երեք
շաբաթ՝ այլ և ալ կասկածներ ծագեցան նրա ընթացքի
նկատմամբ: Նազարէ կեանքներու մէջ, Գիշ ճամնակ յե-
տոյ կեդրոնի ժողովը տեղի կուենանայ, որուն մէջ ձայն
ունէին միայն արտասահմանէն եկող պատգամաւորներ.
այդ ժողովի մէջ է որ կը արուի յիշեալ վճարելը, որոյ
կարևոր մասերն հետեւեալներն են թէ.

1. Արժիար անկարգապահութիւնն ըրած է. պաշտօնա-
կան յարաբերութիւններ հաստատած է, հրահանգներ ար-
ձակած է և այնպիսի կարգապահութիւններ ըրած է, որք
կը վերաբերին կեդրոնի անդամներու իրաւասութեան:

2. Կեդրոնի անդամներու մէջ անդիւ ունեցած խոր-
հրդածութիւններէ և որչափ անհանգիստ էին ինչ գաղտնի կէ-
տեր և ուրիշ գաղտնիքներ երևան հանած ու կուսակցու-
թենէ բոլորովին օտար անձերու յայտնած է:

3. Գաղտնաբերը եղանակներով և զրպարտիչ ամբաս-
տանութիւններով աննպաստ և հակառակ ընթացք բըռ-
նած է զէպի կուսակցութեան ընդհանուր շահերը և զէ-
պի անոր պաշտօնապէս ճանչցած կարգերը, որպէս և պաշ-
տօնապէս ճանչցուած անդամներ:

Եւ «նկատելով նոյնպէս որ Պ. Արժիար Արժիարեանի
այդ ամբողջ ընթացքը ուրիշ նպատակի համար չէ, և թէ
ոչ ձգտուած մըն է ձեռք անցուցուլու կուսակցութեան
գործերու ընդհանուր զեկավարութիւնը, որպէս և իրմ-
բաբարութեան իրաւունքները. ուստի միաձայնութեամբ
պաշտօնապէս կը յայտարարուի թէ Արժիարն այլ ևս չի
համարուիր Հնչակեան կուսակցութեան պատկանող ան-
դամ»:

Այս վճարոյն մէջ ինչպէս որ կերևի՝ չի կայ մատ-
նութեան ու դաւաճանութեան խնդիր, որով ամբաստան-

ուած է այս մարդ, և մանաւանդ
վճարելը կոչուած այս դատավճիռը
ինքնին ամբաստանութիւն մ'է: Ինչ-
պէս կարելի է մէկը դատապարտել
և վճիռ արձակել անոր դէմ՝ առանց
ամբաստանեալը և անոր փաստերը
մտիկ ընելու: Բարբարոս կոչուած
տաճիկն անգամ՝ գէթ ձեւակերպու-
թեան համար՝ ամբաստանեալ յեղա-
փոխականին խի ստիպելու անոր ինք-
զինքը արդարացնելու: Հետեւաբար
այս 8 ստորագրութիւն կողմ վճար-
ելը մի ուրիշ ամբաստանութիւն է,
որ կը կարծուի քննադատութեան և
պապացոյցի: Հոս ալ տօքումաններու
պէտքը կայ...:

Սակայն մարդ չի կրնար իր զար-
մանքն ու զայրոյթը զսպել երբ այս
վճարելին կցուած Նազարէ կեանքնե-
րու շրջաբերականը կարգաւ ստոր-
ջութեամբ. Օգոս. 14—96 թուական-
նաւ. «Հնչակեան կուսակցութեան
կեդրոնի կողմից» Պ. Նազարէ կեան
պաշտօնական յայտարարութեամբ մը
«ի գիտութիւն Հնչակեան ընկերնե-
րին կը յայտարարէ՝ թէ այսուհետեւ
վերջնականապէս խզուած ու կըս-
րուած են ամեն կապեր Միհրան Տա-
ճատեանի և Անտոն Ռշտունիի, Աղա-
սիի և այն բոլոր անձերի հետ, որոնք
գործակից են առաջիններին, (այսինքն
անոնց որք բաժնուած են Կենդրո-
նէն) և նմանապէս յայտարարուի՝
թէ Պօլսոյ մասնաճիւղն ալ լուծված
է» այլ ևս:

Գուցէ աւելորդ է գրելու տալ
թէ այս նոր արտաբերուողներուն մէջ
են Արժիարի վճարելը ստորագրող-
ներէն մի քանին, որք ի հարկէ «վճա-
ռաբեր ստորագրելուց ի վեր» շատ
չանցած՝ իրենց ընթացքի մասին,
Արժիարի նկատմամբ կասկածի տեղի
տուած են կուսակցութեան տիկտա-
տօրներուն:

Այս դարձուածքներուն մարդ
ուրիշ բացատրութիւն չի կրնար տալ,
միայն տեսնել մը աչքկապուկ ան-
ուսանել. սակայն կապուած աչքերը
կը թուի թէ բացուած են վերջապէս
և բացուած են՝ խնդիրներու խորը
թափանցելու համար:

Այս արտաբերութեան վերջ նո-
րակազմ Հնչակեաններն ընդհանուր
ժողով մը կուենան Լօնտոնի մէջ,
որուն կը հրաւիրեն Նազարէ կեան-
ներն ու հինկուր կեդրոնական ժո-
ղովոյ բոլոր անդամներն: Առաջիննե-
րը՝ շեն պատասխաներ այս հրահա-
րին. բայց վերջիններէն Տիարք Ա-
ղասի, Տաճատեան և Ալապ, նոր ար-
տաբերուողները, ներկայ կը գտնուին
հոն: Արժիարի խնդրանքը՝ իր վճա-
ռաբեր կամ ամբաստանաբեր խնդ-
րոյ առարկայ կ'ըլլայ այդ ժողովի
մէջ, և բացարձակ քուէից առաւել
վճարելու չ'եղեալ կը համարուի,
սա հիման վրայ թէ՛ վճարելու ար-
ուած էր լոկ ամբաստանողներու կող-
մէ՝ առանց ամբաստանելոյն բա-
ցատրութիւնները լուր: Նոր ամ-
բաստանողներ չ'գտնուելէ զատ այդ
ժողովին մէջ՝ Տիարք Աղասի, Տա-
ճատեան և Ալապ, որք վճարելը
ստորագրած էին, հետեւեալ բացատ-
րութիւնները կուտան:

(Շարունակելի)

ԱԶԴ

Բնիկ Բէսապցի Իսթէնտէր Խա-
չիւրեան կամ Ալէքսանտր Հաքըր եւ
կամ Ա. Մարթայր անունով անձ մը,
որ բաւական տարիներէ ի վեր Ամե-
րիկա կը գտնուի և որ երեք տարիի
չափ առաջ Բլիւլըլտի (Օհայոյ) մէջ
տեսնուած ըլլայ, կը փնտրուի իւր
քրոջ մէջ. տեղեկութիւն ունեցողք
հաճին զրել առ.

Rev. S. V. BEDICKIAN,
275 Ridge Ave, ALLEGHENY, PA.

